

**SUMMER EXPO**  
1 MAY - 25 MAY 2003 / 4-10PM

Beirut  
**LEISURE**



AIN EL MREISSEH  
TEL.: 01- 36 10 40

# ԱԶՏԱԿ

— ԹՐԱԹԵՐԹ —

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 Լ.Ո. 76ԳՎ ՏԱՐԻ, ԹԻԻ 52 (21395) ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 12 ՄԱՅԻՍ 2003 10 ԷՁ

**ՀՈՆԿ ԲՈՆԿԻ ՄԷՋ ԳՏԱԾ ԵՆ ՍԱՐՍԻ ՆՈՐ ԴԱՐՄԱՆՈՒՄ ՄԸ**

Չինաստանի վարչապետ Ուեն ճիապաու երկն յայտնում է, թե՛ երկրին ՍԱՐՍԻ տագնապը մտահոգիչ կը մնայ եւ պզուշացուցած է, թե՛ հիւանդութիւնը տակաւին հակակշիռի տակ չէ առնուած եւ կրնայ աւելի եւս տարածուիլ:

Ան ըսած է, որ յատկապէս կարեւոր է հիւանդութեան տարածումը կասեցնել գիւղական շրջաններուն մէջ, ուր բնակչիւններուն մեծամասնութիւնը կ'ապրի:

Մինչ այդ, Հոնկ Բոնկի համալսարանին հետազոտողներու մէկ խմբակը երէկ ըսած է, թե՛ ՍԱՐՍԻ նոր դարմանում մը գտած է:

**ԻՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՍՈՂԱՍԵՏ ԽԱԹԵՍԻ ԱՅՍՕՐ ԿՐ ԺԱՄԱՆԷ ՊԵՅՐՈՒԹ**

Ընդառաջելով նախագահ Էսքաթ Էմինի Լահուտի հրահրանքին, Իրանի նախագահ Մոհամէտ Խաթեմի այսօր պաշտօնական եռօրեայ այցելութեամբ մը կը ժամանէ Լիբանան, ուր հանդիպումներ կ'ունենայ պետական եւ բարձրաստիճան պաշտօնատարներու հետ:



Լահուտի նախագահ Խաթեմի այցելութիւնը նկատեց Լիբանան – Իրան երկկողմանի յարաբերութիւններու ամրապնդում:

Նախագահ Լահուտ յայտնեց, որ Լիբանան եւ Իրան պիտի քննարկեն շրջանային հարցեր, շեշտելով միջազգային օրէնքներու գործադրութեան անհրաժեշտութիւնը եւ դատապարտելով մենատիրութիւնը:

Նախագահ Լահուտ ըսաւ, որ Լիբանան կը դրուատէ եւ շնորհակալ է Իրանի ցուցաբերած պօրակցութեան եւ օժանդակութեան համար:

Նախագահ Լահուտ աւելցուց, որ Լիբանան կ'արժեւորէ Միացեալ Նահանգներու եւ ՄԱԿի կողմէ այն բոլոր ճիգերը, որոնք ի գործ կը դրուին Միջին Արեւելքի մէջ՝ ստեղծելու արդար եւ ամբողջական խաղաղութիւն, պարտադրելով միջազգային օրէնքներու գործադրութիւնը:

Նախագահ Լահուտ այս յայտարարութիւնները կատարեց Իրանեան պաշտօնական լրատու գործակալութեան (ԻՐՆԱ) հետ հարցազրոյցին ընթացքին, նախագահ Խաթեմի Պէյրութ այցելութեան նախօրեակին:

**ՀՅՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

Հ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն կ'ողջունէ Իրանի նախագահ Մոհամէտ Խաթեմի Լիբանան կատարելիք պատմական այցելութիւնը՝ Իրաքի պատերազմէն ետք ստեղծուած իրավիճակին լոյսին տակ:

Կը գնահատենք Լիբանանի եւ Իրանի իսլամական հանրապետութեան միջեւ սերտ գործակցութեան արտայայտութիւնը եղող այս նախաձեռնութիւնը, շեշտելով Լիբանանի, Սուրիոյ եւ Իրանի միջեւ համակարգումի անհրաժեշտութիւնը՝ մարտահրաւիրները դիմագրաւելու ի խնդիր:

Այս համակարգումը կենսական կը նկատենք հասարակաց դատերու եւ Միջին Արեւելքի տագնապին ամբողջական եւ արդար լուծում մը գտնելու համար:

Նախագահ Խաթեմի այցելութիւնը կը կատարուի այնպիսի պահու մը, երբ Լիբանանի եւ Սուրիոյ վրայ ամերիկեւիստայիւնեան ճնշումները կը բարձրանան:

Նախագահ Խաթեմի այցելութիւնը տնտեսական առումով եւս պօրակցութիւն մըն է Լիբանանի, տարբեր մարպերու մէջ կնքուելիք համաձայնագիրներու ընդմէջէն:

Հ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն կ'ընդգծէ հայ եւ արաբ եւ յատկապէս հայ եւ Իրանի ժողովուրդներուն միջեւ պատմական յարաբերութիւնները, վեր առնելով նախագահ Մոհամէտ Խաթեմի դերը այս յարաբերութիւններուն առաւել ամրապնդման եւ պարգացման մէջ:

10 Մայիս 2003 Հ. Յ. Գ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

**ՊԱՂԵՍՏԻՆԵՒԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՏԱԳՆԱՊ**

**ՓԱՌԷԼ ՄԵՐԺԵՑ ՏԵՍԱԿՑԻԼ ԱՐԱՖԱԹԻ ԸՆԴԿՁՈՒՄԻ ՄԵԾ ԱԼԻՔ ՄԸ ՅԱՌԱՋԱՑՆԵԼՈՎ**

Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը վերականգնելու եւ պաղեստինեւիստայիւնեան տագնապին լուծում մը գտնելու նպատակով շաբաթվա ընթացքին Իսրայէլ ժամանեց Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլ, որ տեսակցութիւններ ունեցաւ Իսրայէլացի ու պաղեստինցի պատասխանատուներու հետ: Ուաշինկթընի որդեգրած քաղաքականութեան հաւատարիմ մնալով Փաուըլ մերժեց տեսակցութիւն ունենալ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթի հետ՝ ընդվզումի ալիք մը յառաջացնելով պա-



Փաուըլ Շարոնի...

ղեստինեան շրջաններուն մէջ: Իսրայէլացի եւ պաղեստինցի ղեկավարներուն հետ հանդիպումներուն ընթացքին, Փաուըլ շեշտը դրաւ խաղաղութեան ճամբու քարտէսի գործադրութիւնը արագացնող միջոցներուն վրայ: Փաուըլի առաջին հանդիպումը եղաւ Իսրայէլացի պաշտօնակիցին՝ Միլիան Շարոնի հետ: Փաուըլ ըսաւ, որ Իսրայէլացիներէն եւ պաղեստինցիներէն կը պահանջուի որդեգրել փոխադարձ վստա-



... եւ Ապպասի հետ

հուրիւն ներշնչող միջոցառումներ: Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի հետ հանդիպումը տեղի ունեցաւ երէկ Երուսաղէմի մէջ: Փաուըլ ողջունեց Իսրայէլի որդեգրած կարգ մը միջոցառումները, դիտել տալով որ անոնք թէեւ խոստմնայից, բայցեւայնպէս չեն ամբողջացներ պահանջուած բոլոր պայմանները:

Ուաշինկթըն կը պահանջէ, որ Իսրայէլ ստեղծէ բնակեցման աշխատանքները, ինչպէս նաեւ ուժերը հեղի ունեցաւ երէկ Երուսաղէմի մէջ: Փաուըլ ողջունեց Իսրայէլի որդեգրած կարգ մը միջոցառումները, դիտել տալով որ անոնք թէեւ խոստմնայից, բայցեւայնպէս չեն ամբողջացներ պահանջուած բոլոր պայմանները:

Ուաշինկթըն կը պահանջէ, որ Իսրայէլ ստեղծէ բնակեցման աշխատանքները, ինչպէս նաեւ ուժերը հեղի ունեցաւ երէկ Երուսաղէմի մէջ: Փաուըլ ողջունեց Իսրայէլի որդեգրած կարգ մը միջոցառումները, դիտել տալով որ անոնք թէեւ խոստմնայից, բայցեւայնպէս չեն ամբողջացներ պահանջուած բոլոր պայմանները:

**23 ՏԱՐԻ ԵՏԸ**

**ՇԻԻ ԿՐՕՆԱՊԵՏ ԱՅԱԹՈԼԼԱ ՄՈՀԱՄԷՏ ՊԱՔԷՐ ՀԱՔԻՄ ՎԵՐԱԴԱՐՁԱԻ ԻՐԱԲ**

23 տարի աքսորուած մնալէ ետք, Շարաթ օր Իրաք վերադարձաւ շիի կրօնապետ Ալաթոլլա Մոհամէտ Պաքէր Հաքիմ, որ կը ղեկավարէ Իրաքի մէջ իսլամական Յեղափոխութեան Գերագոյն Ժողովը: Պաքէր Հաքիմ, որ Իրան կը գտնուէր, ցամաքի ճամբով սահմանը անցաւ՝ Պասար մտնելու համար:



Հաստատել: Հաքիմ ըսաւ, որ Իրաքի մէջ պէտք է հաստատուի ժողովրդավար կառավարութիւն մը, որ կը ներկայացնէ ամբողջ Իրաքը եւ անոր ժողովուրդը, որուն մաս կը կազմեն քրիստոնեաները եւ սիւննիները: Շիիները Իրաքի բնակչութեան տոկոսի մը պիտի ուզէ

Տասնեակ հազարաւոր շիիներ ղեմաւորեցին Հաքիմը, որ խօսքը ուղղելով ներկաներուն պահանջեց, որ Իրաքը խտացնեն ու ամբապնդեն՝ դէմ դնելու համար կայսերապաշտութեան: Իր խօսքին մէջ Հաքիմ փարատեց այն մտաւորութիւնները, ըստ որոնց շիի կրօնապետը Իրանի հետեւողութեամբ իսլամական հանրապետութիւն մը պիտի ուզէ

**ՍՈՒՐԻԱ ՊԱՏՐԱՍԵ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎԵՐՍԿՍԻԼ ԻՍՐԱՅԷԼԻ ՀԵՏ**

Սուրիա պատրաստ է բանակցութիւններու վերսկսելու Իսրայէլի հետ, հաղորդեց «Թըրքին» պաշտօնաթերթը, որ կը պատասխանէր Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի առանց նախապայմանի բանակցելու կոչին:

«Թըրքին» կը գրէր, որ Սուրիա միշտ ալ մերժած է գաղտնի կապերն ու բանակցութիւնները, հաստատ մնալով խաղաղութեան գործընթացի սկզբունքներուն վրայ, որոնք որդեգրուած են միջազգային ընտանցիկի եւ Միացեալ Նահանգներու նախկին նախագահ Շորթ Պուշի կողմէ: Օրաթերթը կ'աւելցնէր, որ Իսրայէլի հետ որդեգրուած բանակցութիւն պէտք է հիմնուած ըլլայ ՄԱԿի որոշումներուն եւ հողի փոխարէն խաղաղութիւն սկզբունքին վրայ:

Իսրայէլ անմիջապէս պատասխանեց, որ կ'ուզէ բանակցութիւններուն վերսկսել, պայմանաւ որ Դամասկոս «մաքուր ձեռքերով» ներկայանայ: Արտաքին գործոց նախարար Միլիան Շարոն ըսաւ, որ Դամասկոս պէտք է խզէ իր բոլոր կապերը ահաբեկչական կազմակերպութիւններուն հետ:

Միացեալ Նահանգներ եւ Սուրիայէն պահանջած էին փակել արմատական շարժումներու գրասենեակները: Սուրիոյ մէջ գործող պաղեստինեան արմատական շարժումներ որոշած են սեղմել իրենց գործունէութիւնը, որպէսզի Դամասկոս կրնայ շարտաքստ՝ ամերիկեան ճնշումներուն ենթարկուելով: Անոնք որոշած են կարելի եղած չափով իրենց ներկայութիւնը անզգայի դարձնել, որպէսզի Ուաշինկթըն կրնայ իրեն ճնշումի խաղաքարտ չգործածէ Դամասկոսի դէմ:

Միւս կողմէ, Սուրիոյ նախագահ Պաշար Ասատ ըսաւ, որ Դամասկոս հաւատարիմ չէ տուած պաղեստինեան շարժումներու գրասենեակներ փակելու Ուաշինկթընի պահանջին: Ասատ աւելցուց որ Փաուըլի հետ հանդիպումին այս հարցը արժարժուած է. սակայն եզրակացութիւն մը չէ գոյացած:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԵԱՀԿԻ ՄԻՆՍԲԻ ԽՄԱԿԻՆ ԿՈՂՄԷ ՊԱՏՐԱՍՏՈՒՈՂ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ՊԻՏԻ ԳՈՀԱՑՆԵՆ ԲՈԼՈՐ ԿՈՂՄԵՐԸ**

Կ'ԸՍԷ ԿՐԻՊԵՈՎ

Պաքուի մէջ հրատարակուող «Էխօ» թերթը հաղորդեց, որ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման ԵԱՀԿի Մինսքի խմբակի ռուս նախագահ Նիքոլայ Կրիպչով Փաքուի մէջ յայտարարած է, թէ տագնապի լուծման համար խմբակին կողմէ պատրաստուող առաջարկները պիտի գոհացնեն տագնապին բոլոր կողմերը: Ռուս դիւանագետը այս յայտարարութիւնը կատարած է պատկերասփռուած հարցազրոյցի մը ընթացքին: Ըստ Կրիպչովի, միջազգային միջնորդները վերամշակելով իրենց բոլոր նախորդ առաջարկները նոր փաստաթուղթի մը մէջ, ընդգրկած են միայն կառուցողական այն առաջարկները, որոնք ընդունելի են երկու կողմերուն: «Մինսքի խմբակի նախագահները համոզուած են, որ նախապատրաստուած նոր առաջարկները անպայման կ'ընդունուին Հայաստանի եւ Արարեւմտեան նախագահներուն կողմէ», յայտարարած է Կրիպչով, աւելցնելով, որ կրնայ պատահիլ, որ որոշ ժամանակ տարակարծութիւններ կրնան յարաբանալ, սակայն ընդհանուր առմամբ նոր առաջարկները ձեւաւորուած են այնպէս, որ համաձայնութեան բերէն տագնապի բոլոր կողմերը:

Նիքոլայ Կրիպչով տեղեկացուցած է, թէ շրջան կատարելիք իրենց յառաջիկայ այցելութեան ընթացքին ԵԱՀԿի Մինսքի խմբակի նախագահները պիտի բանակցին նաեւ Լեռնային Ղարաբաղի նախագահ Արկադի Ղուկասեանի հետ: Պաքուի կողմէ այս հարցին գծով բողոքներուն պատասխանելով, Կրիպչով դիտել տուած է, թէ Մինսքի խմբակի նախագահները հանդիպում պիտի ունենան ո՛չ միայն Ա. Ղուկասեանի, այլեւ «Լեռնային Ղարաբաղի պարպեյճանական համայնքի առաջնորդին հետ»: «Մենք ուզուցէնք մեկուսի դիրքորոշումը չենք գերադասել եւ չենք կարծեր, որ Ղարաբաղի հայոց ղեկավարին հետ հանդիպումը կրնայ խնդիրներ յառաջացնել: Ընդհանրապէս, մենք կը փորձենք նկատի ունենալ բոլոր կողմերուն շահերը եւ կը ձգտինք ընդհանուր դիրքորոշում մը մշակել», ըսած է Կրիպչով:

Նիքոլայ Կրիպչով նշած է, թէ շրջան այցելելի առաջ ԵԱՀԿի Մինսքի խմբակի նախագահները հանդիպում մը պիտի ունենան:

**ՄԵՆՔ ՉԵՆՔ ԿՐՆԱՐ ՄԵՆՔ ՉՄԵՁ ԹՈՅԼ ՏԱԼ 113 ՏԱՐՈՒԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ ԱՆՁԳՈՒՇ ՇԱՐԺՈՒՄՈՎ ՄԸ ՔԱՆԴԵԼ**

Կ'ԸՍԷ ԸՆԿ. ՎԱԿԱՆ ՅՈՎԿԱՆՆԻՍԵԱՆ

ԷՁ 4

(ԱՅՓ)

### ՄԻՔԱԹԻ ԿԸ ԴՐՈՒՄՏԷ ՍՅԵՅՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԿԵՑՈՒԱԾՔՆԵՐԸ

Հանրագուտ շինութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարար Նեժիպ Միքաթի երէկ Պարբոնի Հարտին գիւղին մէջ հիմնարկէք կատարեց շրջանի քաղաքապետարանին, Նամթալլա Հարտինիի սուրբ հոշական 5րդ տարեդարձին առիթով:

Միքաթի դրուատեց մարտնիներու Նամթալլա Պուրոն Սֆէյր պատրիարքին կեցուածքները, որոնք կ'ամրապնդեն լիբանանցիներու միասնականութիւնը:

Միքաթի կոչ ուղղեց ամրապնդելու ներլիբանանեան միասնականութիւնը, շեշտելով անոր անհրաժեշտութիւնը:

Չեռնարկին խօսք առաւ նաեւ երեսփոխան Պուրոն Հարպ եւ կոչ ուղղեց, որ կառավարութիւնը ըլլայ բոլոր լիբանանցիներուն կառավարութիւնը եւ գործադրէ բարգաւաճման ծրագիրները:

Իր կարգին խօսք առաւ հիւսիսի նահանգապետ Նասիֆ Քալուշ, որ փոխանցեց ներքին գործոց նախարար Էլիաս Մըրի խօսքը:

Հիմնարկէքը կատարուեցաւ Էլիաս Մըրի հովանաւորութեամբ:

### ՎԱՅԷ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

#### ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ 2003-2004 ՏԱՐԵՇՐՁԱՆ

Վայէ եւ Թամար Մանուկեան Հիմնարկութիւնը՝ 2002-2003 ուսումնական տարեշրջանին կրթաթրջակ յատկացուցած է 181 համալսարանական ուսանողներու:

Հիմնարկութիւնը հաճոյք ունի յայտարարելու, թէ այս տարի եւս կրթաթրջակ պիտի յատկացնէ ուսանողներու, որոնք կը փափաքին լիաժամ (full time) համալսարանական ուսումն հետեւելի 2003-2004 ուսումնական տարեշրջանին:

Կրթաթրջակի դիմումագիրները ստանալու համար՝ կրթաթրջակ ստացող բոլոր նախկին ուսանողները, ինչպէս նաեւ նոր թեկնածուները պարտին ներկայանալ Հիմնարկութեան Գրասենեակը, 13 Մայիսէն մինչեւ 30 Մայիս 2003 (բացի Ծաբաթ օրերէն), կէսօրէ առաջ ժամը 11:00էն մինչեւ կէսօրէ ետք ժամը 5:00, ստորեւ նշուած հասցիին:

Վայէ եւ Թամար Մանուկեան Հիմնարկութիւն ժել Էլ Տիպ Հրապարակ, Մալլա Սեմբըր, 5րդ յարկ Հեռաձայն՝ 04-713532

ՎԱՅԷ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

### ՄԱՀԱԶԴ

Գեր. Հ. Անդրանիկ վրդ. Կոստեան Անարատ Յղութեան Հայ Գոյրերու միարանութիւնը Ս. Հոփսիմեանց վարժարանի տնօրէնութիւն

եւ առաքինազարդ բոլոր կը գուժեն միարանակից նուիրեալ բոլոր, բազմակատակ կրթական մշակ՝

### ԶՈՅՐ ՅԱՍՄԻԿ ՏՈՄՊՈՒՐԵԱՆԻ

Մահը, որ պատահեցաւ Շարաթ, 10 Մայիս 2003ի երեկոյեան, «Ժե՛նթառի» հիւանդանոցին մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի, 12 Մայիսին, առաւօտեան ժամը 11:00ին, Զաւթալի Ս. Ուշակ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Անարատ Յղութեան Հայ Գոյրերու Զմամաի գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:
- Սրբոց Հոփսիմեանց վարժարանի տնօրէնութիւնը եւ առաքինազարդ բոլորը ցաւակցութիւններ պիտի ընդունին վարժարանին դաշիմին մէջ, այսօր՝ Երկուշաբթի, 12 Մայիսին, կէսօրէ ետք ժամը 5:00էն 8:00, իսկ վաղը՝ Երեքշաբթի, 13 Մայիսին, առաւօտեան ժամը 10:00էն մէկ, իսկ կէսօրէ ետք ժամը 4:00էն 8:00:

### ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Գրիգոր Սաաթեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Նէպիլէ Էմմէքէն եւ զուտորը Օրդ. Բնար Սաաթեան Տէր եւ տիկին Վահէ Թիւսիւզեան եւ զաւակունք Տիկին Մարի Պոյաճեան Տէր եւ տիկին Նազարէթ Զրոթեան եւ զաւակունք Կիրակոսեան ընտանիք Աղամ ընտանիք Թոփրաքեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝

### ՀԵՐՄԻՆԷ ՍԱԱԹՃԵԱՆԻ (ՏՃՆԵԱ՛Կ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ)

Մահը, որ պատահեցաւ սրտի կաթուածի հետեւանքով: Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երկուշաբթի, 12 Մայիս 2003ին, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորի Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:
- Յուզարկութիւնները կ'ընդունուին Երկուշաբթի 12 եւ Երեքշաբթի 13 Մայիսին, կէսօրէ ետք ժամը 2:00էն 8:00, Ժուլիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ սրահին մէջ: Իսկ Չորեքշաբթի, 14 Մայիսին կէսօրէ ետք ժամը 2:00էն 8:00՝ «Տեմիրճեան» կեդրոնի Ապաւաններու սրահին մէջ, 5րդ յարկ, Նաքքալ:
- Փոխան ժողկեպակի կը խնդրուի նուիրատուութիւններ կատարել բարեպաշտական միութիւններու:

### ՔՐԸՄ ԿԸ ՔՆՆԱԳԱՏԷ ԵՐԿՐԻՆ ԵԼԵՒՄՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ելեւմուտքի նախկին նախարար Ժորժ Քրըմ շաքաթակերէն կատարեց յայտարարութիւններ՝ ձայնասփիւռի «Լիբանանի ձայն» կայանին հետ ունեցած իր հարցազրոյցին ընթացքին:

Քրըմ դրուատեց Յովհաննէս-Պողոս Բ. պապին կեցուածքները, որ արգիլեց կրօնքներու եւ քաղաքակրթութիւններու բախումները:

Ան նկատել տուաւ, որ մարտնիներու Նամթալլա Պուրոն Սֆէյր պատրիարքը եւս հետեւեցաւ եւ ամբողջացուց Յովհաննէս-Պողոս Բ. պապի կեցուածքները: Քրըմ աւելցուց, որ Խորալէի եւ Միացեալ Նահանգներու մէջ գտնուող ծայրայեղականները ամէն ջանք ի գործ դրին Լիբանանի մէջ ստեղծելու համայնքային հարցեր:

Քրըմ քննադատեց Լիբանանի ելեւմտական մարտնիներու ստուա, որ դրամա-

### ԱԿՆԱՐԿ

#### «25 ՄԱՅԻՍԻՆ ԿԸ ՅԱԶՈՐԳԷ ՄԱՅԻՍ 26Ը»

Խորագիրը կը պատկանի Հ. Յ. Գ. Բիւրոյի անդամ, Ազգային Ժողովի պաշտպանութեան եւ անվտանգութեան մնայուն յանձնաժողովի նախագահ ընկ. Վահան Յովհաննիսեանի (կարդայ 4րդ էջով), որուն քաղաքական թէ համապատասխան պատգամը յատակ է ըստ ամենայնի:

25 Մայիսին կը կատարուին Հայաստանի խորհրդարանական ընտրութիւնները, որոնց արդիւնքին լոյսին տակ կը ձեւաորոշուի խորհրդարանի նոր կազմը, հաւանաբար ուժերու տարբեր յարաբերակցութեամբ, տարբեր դիմագիծով, յատկապէս կուսակցութեանց ներկայացուցչութեան իմաստով:

Սակայն հապի ընտրութիւնը աւարտած, ճիշդ է, կու գայ 26 Մայիսը, ապա 27, 28 եւ այսպէս՝ ամբողջ չորս տարիներ, մինչեւ նորին ընտրութիւնը:

Հետեւաբար սխալ, շատ սխալ պիտի ըլլայ ինքզինք յարգող ռեւէ կուսակցութեան համար՝ հարցերը դիտել մինչեւ 25 Մայիս ժամանակաշրջանի ծիրէն ներս, այլ խօսքով՝ հարցերուն մօտենալ միայն ընտրական հաշիւներու նեղ պարունակով: Կարձատեսութիւնը, քիթին տակ տեսնելու ոչ հասուն քաղաքականութիւնը ընդունելի է այլեւս ռեւէ մէկուն համար, իշխանութիւն, իշխանամէտ թէ ընդդիմադիր հաւասարապէս: 25 Մայիսի ընտրութիւնները կ'աւարտին եւ յաջորդ օրն իսկ, 26 Մայիսին գործ կայ, ահագին գործ կատարելիք: Կայուն, հպօր ու բարգաւաճ հայրենիք ունենալու համար հարկադրուած ենք հեռուտեալ ըլլալ եւ մտածելու մեր եղանակը ձեւաորոշել միայն ու միայն համապատասխան դիտանկիւնով: Ամբողջական Հայաստանի կորիզը կազմող այսօրուան մեր հայրենիքը կը կարօտի քաղաքական միասնականութեան, առանց որուն անկարելի է յառաջդիմութիւն արձանագրել: Ճիշդ է, որ կան եւ ժողովրդավար հասկացողութեամբ բնականաբար միշտ պիտի ըլլան գաղափարական տարբերութիւններ, պիտի ըլլան քաղաքական տարակարծութիւններ բոլոր բնագաւառներուն մէջ, բայց անոնք սահմանուած պէտք է ըլլան յստակ, կարմիր գիծով մը, զոր ռեւէ մէկը իրաւունք չունի շրջանցելու, յանուն հասկացալի մեր շահերուն: Հայրենիքը վեր է ամէն բանէ: Հայրենիքն անկատար գիտակցութիւնը կը պարտադրէ անխտիր բոլորիս՝

առաջնորդուիլ այն հասկացողութեամբ, որ այդ, 25 Մայիսին կը յաջորդէ 26 Մայիսը, որ բոլորիս միասին, Հ. Յ. Գ. կոչուիք թէ հանրապետական, Օրինաց Երկիր կամ այլ, առաւել՝ իշխանութիւնները, թիկունք թիկունք շարունակենք մեր ազգայնուէր գործունէութիւնը, ծաւալենք անսահման աշխատանքի մեր դաշտը, յանուն ազգային մեր արժանապատուութեան, մեր ժողովուրդի բարօրութեան, մեր հայրենիքի առաւել կայունութեան, մեր պետականութեան ամրապնդման ու անվտանգութեան:

ՀՐԱՉ ՎԱՐՃԱՊԵՏԵԱՆ

«ԱՉԳԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ

Սալի Մարտիրոսեանի մահուան յիշատակին. Ընկերուկի մը 20 \$

**ՆԱՆՈՐ ԹԱՃԵԱՆ ԸՆԴ ՅԱԿՈՐ ՄԱՐԿԱՐՈՍԵԱՆ ՆՇԱՆՈՒՄ**

10 Մայիս 2003 Պէյրոս

### ՍՅԵՅՐ ԿՈՉ ԿՈՒՂՂԷ ԸԼԱԿ ԱԵԼԻ ՔԱՆ ԵՐԲԵՔ ՄԻԱՄՆԱԿԱՍ

Մարտնիներու Նամթալլա Պուրոն Սֆէյր պատրիարքը Կիրակի օրու իր քարոզի մէջ անդրադարձաւ երկրին ընկերային վիճակը յուշող կարգ մը երեւոյթներու:

Սֆէյր պատրիարքը ըսաւ, որ եթէ համեստ դասակարգի պատկանող ընտանիքներուն եկամուտը հարցեր կը ստեղծէ եւ դժուարութիւններ, միւս կողմէ կան այլ հարցեր, որոնք կը խնչընդոտեն ճիշդ կրթութեան ուղին, ինչպէս՝ թմրեցուցիչի գործածութիւնը եւ անվայել վարքեր այցելութիւնները, անտեսելով ուսումն ու գիտութիւնը:

### ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Նազ Պեանիւբեան Տէր եւ տիկին Մանուկ Պեանիւբեան Տիկին Մարիան Պեանիւբեան Տէր եւ տիկին Վարուժան Պեանիւբեան Տէր եւ տիկին Մարի Պեանիւբեան Տէր եւ տիկին Յարութ Արզուղալճեան Տէր եւ տիկին Սագո Արզուղալճեան Տէր եւ տիկին Մարսէլ Մուսա Տէր եւ տիկին Իլիաս Հապիպ եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց զաւակին, թոռնիկին եւ հարազատին՝

### ՍԻԼՎԻ ՊԵՍՆԻԼԵԱՆԻ (ՏՃՆԵԱ՛Կ 1994ԻՆ)

Մահը, որ պատահեցաւ Կիրակի, 11 Մայիս 2003ին յետ արկածի: Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի, 12 Մայիս ժամը 1:00ին, Ս. Քառանից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:
- Յուզարկութիւնները կ'ընդունուին հանգուցեալին ծնողքին բնակարանը, Մըլիէր, թիւ 169 շէք, Երկուշաբթի 12, Երեքշաբթի 13 եւ Չորեքշաբթի 14 Մայիսին:

### ՄԱՀԱԶԴ

Տապանեան ընտանիք կը գուժեն իրենց մօր եւ մեծ մօր՝

**ՄԱՐԻ ՏԱՊԱՆՃԵԱՆԻ (ՏՃՆԵԱ՛Կ ԹԻՐԻՆԿԵԱՆ)**

Մահը, որ պատահեցաւ Կիրակի, 11 Մայիս 2003, յետ կարճատեւ հիւանդութեան: Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի 12 Մայիս, կէսօրէ ետք ժամը 14:00ին, Հայ կաթողիկէ Ս. Եղիա եկեղեցւոյ մէջ, Տրպապա:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:
- Յուզարկութիւնները կ'ընդունուին հանգուցեալին վաւակին՝ Մանուկ Տապանեանի բնակարանը, Ռապիէ, Երկուշաբթի 12 եւ Երեքշաբթի 13 Մայիսին:

### ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Յարութի Մարկոսեան եւ զաւակունք Չուարթ եւ Յովհաննէս Մարկոսեան Տէր եւ տիկին Ղազար Մարկոսեան Ալեքսանեան ընտանիք Թորիկեան ընտանիք Գարակէօզեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր եւ հարազատին՝

### ՄԱՔՐՈՒՆԻ ՄԱՐԿՈՍԵԱՆԻ

Մահը, որ պատահեցաւ Կիրակի, 11 Մայիս 2003, առաւօտեան, յետ երկարատեւ հիւանդութեան: Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի, 12 Մայիս, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ժուլիի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:
- Յուզարկութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Ուսա-Ուսա թաղ, Զառուպ շէք, Երկուշաբթի 12 եւ Երեքշաբթի 13 Մայիսին:

**ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆՆԴԷՍ 85ԱՄԵԱԿ**

Հովանաւորութեամբ՝

**Հ.Ս.Ը.Ս.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ**

Նախագահութեամբ՝

**ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՏՈՔԹ. ՍԵՊՈՒՀ ՅՈՎՆԱՆԵԱՆԻ**  
(Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար)

Կազմակերպութեամբ՝

**Հ.Ս.Ը.Ս.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ**

Շաբաթ, 31 Մայիս 2003, երեկոյեան ժամը 9:00ին, GRAND HILLS VILLAGE պանդոկի APNEA սրահին մէջ, Պրումմանա:

**ՀԱՄԱԶԱՅԻՆԻ ՊԱՐԱՐՈՒԵՍԻ ՄԻԱԽՈՐԸ**

Կը ներկայացնէ՝

**ՀԱՄԱԶԱՅԻՆԻ «ՔՆԱՐ» ԵՒ «ԳԱՅԻԱՆԷ» ՊԱՐԱՆՈՒՄԲԵՐՈՒ ԵԼՈՅԹԸ**

Գեղարուեստական ղեկավար եւ պարուսոյց՝

**ՖԵԼԻՔՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**

Հովանաւորութեամբ՝

**ՀԱՄԱԶԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ**

Տեղի կ'ունենայ 22, 23, 25, 30, 31 Մայիս եւ 1 Յունիս 2003ին, երեկոյեան ժամը ճիշդ 8:30ին:

ԿԱԼԱ՛ Շաբաթ 24 Մայիս 2003 երեկոյեան ժամը 8:30ին: Գերեկոյք 24, 25, 31 Մայիս եւ 1 Յունիս 2003 կէսօրէ ետք ժամը 4:30ին: «MONNOT» ԹԱՍԵՐԱՍՐԱԿՆ ՄԵՋ

Sponsored by: **BYBLOS BANK SAL**  
A BANK FOR LIFE








# Աշակուբայր

## ՔԱՆԱՏԱԿԱՅ ԿԵՐՊԱՐՈՒԵՍԱԳԵՏԵՆԵՐ

### ՊԵՐՆ ՉԱՔՆԵԱՆ

Տրուած ըլլալով, որ գեղարվարական ժառանգութիւնը ենթարկուած է զրոյացման և ու կը «մարմնաւորուի» երեւակայութեան միջոցով, տրուած ըլլալով, որ ենթարկուած է զրոյացման և երեւակայութիւնը անվերջ են ու անհատնում, գերի-րապաշտութիւնը եւս անսպառ կը թուի ըլլալ:



«Սիրոյ զիցուհներ»  
Գործ՝ Պերն Չաքմանի

1939ին: Աւարտելէ ետք Գահրիբի Յրանսական Լի-սէն, 1957ին կը սկսի գե-

տակ: Որոշ չափով իր անհատական ոճը գործացնելիս եւ Գահրիբի մէջ շարք մը խմբային ցուցահանդէսներու մասնակցելիս ետք, 1963ին անոր գործերը կը ցուցադրուին «Ալբերտ Կառտիէի Պիէնալ»-ին, ուր կ'արժանանայ բարձր գնահատանքներու:

Պերն Չաքմանի 1968ին կը գաղթէ Քանադա, ուր կը կրթուի Գոնզալեսի և կ'ազմաւորուի «Գեղանկարչի վարկ մը» քանատական արուեստասէր ճասարակութեան մէջ:


Կնոջ տարրեր, յատկապէս դիցարանական կերպարներու զուգահեռ, ան կը պատկերէ նաեւ բնանկարներ եւ անկենդան բնութիւններ, որոնք սակայն հեռու են դասական կամ դասականացած բնայատկերներէն ու անկենդան բնութիւններէն: Անոնք անսովոր կերպով միջոցներու վիճակներ կը դրսեւորեն: Սակայն Պերն Չաքմանի արուեստին առանցքը կ'ին կերպարները կը թուի ըլլալ: Անոնք, սկսեալ դիցուհիներէ մինչև հայրիկները իրմաց նստած շարունակ կ'ընեն, բոլորն ալ նախ մարդ են ամէն բանէ առաջ եւ ապա էգ են մայր ըլլալէ առաջ:

Զգօր երեւակայութեամբ օժտուած այս գեղանկարչը «կ'ապրի» տարաշխարհիկ ոլորտի մը մէջ, ուր կ'ապրեցնէ իր կերպարները, բնութիւնն ու առարկաները, որոնք պատկերուած են կլոր, կոյր, հակաթաճե ու կիսակոյր գիծերով, որոնք յաճախ իրարու վրայ կուտակուելով՝ մէկ կողմէ կը ստեղծեն ինքնատիպ թանկարժէքներ, որոնք աշխարհ մը են միւս կողմէ՝ տաքնապի զգացողութիւնը կը փոխանցեն ակեր-դիրին: Անոր պատկերած կիները շողչ են կը ծնին, սակայն կ'ապրին անջրպետի անհուն տարածու-թեան մէջ, ուր կեանքի զգացողութիւնն ու ոգեղէն միջոցը իրար կը բախին՝ ստեղծելով տեսիլք մը, որ ապրուած կը թուի ըլլալ:

Պերն Չաքմանի գործերէն շատեր տակաւին ծանօթ չեն մեզի, մեր կարծիք կազմուած է սահմանափակ թիւով ստեղծագործութիւններու վրայ: Այնպէս որ, անոր արուեստը արժանի է աւելի ընդարձակ եւ աւելի խոր ուսումնասիրութեան եւ վերլուծման ու մեկնաբանման:

## ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԱՅԱՅՏ ՅՈՒՇԱՐՉԱՆՆԵՐ ՆՈՐԱՎԱՆՔՈՒՄ

Հայ ճարտարապետութեան եւ քանդակագործութեան ուսումնասիրման, վերլուծման, սեկնաբանման եւ բացայայտման անհրաժեշտ եւ կենսական գործին մէջ մեծ եւ նշանակալից տեղ ունի հայրենի ակադեմիկ արուեստաբանները Սուրբատի Հարաբեան: Հայրենի մամուլէն քաղուած եւ ստորեւ տրուած անոր մէկ ակնարկը որոշ գաղափար մը կու տայ մեզի՝ Նորավանքի համալիրի մէկ բաժնին մասին:



Միջնադարեան Հայաստանի կրօնական եւ մշակութային նշանաւոր կենտրոններից մէկն է Նորավանքը, որը գտնուում է Եղեգնաձորի շրջանի Ամաղու գիւղից մօտ 3 մլ. հիւսիս-արեւելք, Արփա գետի վտակի խոր կիրճի լանջին համեմատաբար հարթ տարածքի վրայ: Պարսպապատ համալիրն ունի միմեանց կից կառուցուած երկու եկեղեցի, դաւիթ, դամբարան-եկեղեցի, վանքի արեւելեան կողմում առանձին կանգնած երկյարկանի եկեղեցի, պարսպից դուրս գտնուող երկու մատուռ:

Հիմնադրուելով հաւանաբար դեռ վաղ միջնադարից գոյութիւն ունեցող մենաստանի տեղում, Նորավանքը 13րդ դարում դառնում է Միւսիքի հոգեւոր կենտրոնը եւ Օրբէյեան իշխանական տան տոհմական տապանատունը: Վանքի հնագոյն՝ Ս. Կարապետ եկեղեցին գտնուում է հիմնական յուշարձանախմբի հիւսիսային կողմում: Նրա աւերակները բացուեցին 1982-1983 թուականների պեղումների ժամանակ, որի շնորհիւ պարզուեց եկեղեցու մինչ այդ անյայտ յորինուածքը: Այն շինուած է կոպիտ տաշուած կարմիր գոյնի քիւղիքի խոշոր քարերից, կրաշաղախով (վանքի միւս եկեղեցիները եւ դաւիթը կառուցուած են նոյն քիւղիքի սրբաբնույթ քարերից): Պահպանուել են հիւսիսային պատը ողջ բարձրութեամբ եւ մնացած պատերի ստորին մասերը: Միակ մուտքը արեւմտեան կողմից է: Եկեղեցին միանաւ պազիլիք է, որի դահլիճը



(9,80x5,45 մ.) արեւելքից աւարտուում է պայտածե յատակազիծ ունեցող խորանով: Դահլիճի թաղը նստում է եկեղեցու հիւսիսային եւ հարաւային պատերին կից չորս սական որմնակամարներին, որոնք իրենց հերթին հանդի-չում են կալուեակների վրայ: Եկեղեցու հարաւ-արեւելեան կողմում ուղղանկյուն երկնածածկ, պայտածե խորանով աւանդատունն է, որը մուտք ունի աղօթասարահից, բեմի անմիջապէս առջեւից: Աւանդատան արեւմտեան պատի հաստութեան մէջ, դրսից կայ մի պայտածե խորան եւս, որը հաւանաբար պատկանելի է եկեղեցու հարաւից կից, այժմ չպահպանուած սրահին կամ սենեակին: Վերջինս չի հարդարուելով դահլիճի հետ, եւ ըստ երեւոյթի, առանձին դուռ է ունեցել արեւմուտքից: Դահլիճը, աւանդատունը եւ սրահը ներքուստ են արտաքին պատերի ուղղանկյուն պարագծի մէջ: Եկեղեցին չունի շինարարական արձանագրութիւն. պատմիչ Ստեփանոս Օրբէյեանը միայն նշում է, որ այն կառուցուել է 13րդ դարից բաւական վաղ՝ «Յառաջ քան զայս բացում ժամանակօք, վաղաւորքք եւ հնագոյն ամօք...» (1): Նորավանքի Ս. Կարապետ եկեղեցին իր յորինուածքով եւ որոշ մանրամասներով միջնադարի տեղ է գրաւում Հայաստանի վաղ միջնադարեան արտաքին սրահով միանաւ յուշարձանների եւ Միւսիքի վանական համալիրներից ծաղցաբար (10րդ դ.), Որոտնավանքի (1000 թ.) նոյնատիպ եկեղեցիների միջև: Ս. Կարապետ եկեղեցու կառուցման հաւանական ժամանակաշրջանը կարելի է համարել 9րդ դարը՝ մի թուագրում, որը միանգամայն համապատասխանում է յուշարձանի ճարտարապետական եւ կառուցողական թեքնիք առանձնապատկանութիւններին:

Ս. Կարապետ եկեղեցուն հիւսիսից կից է վանքի գլխաւոր՝ Ս. Ստեփանոս Նախավկայ եկեղեցին, որը կառուցել են իշխան Լիպարիտ Օրբէյեանը եւ Սարգիս արքեպիսկոպոսը 1216-1221 թթ. (օժուր տեղի է ունեցել է 1223 թ.) (2): Եկեղեցու ներսում պահպանուած արձանագրութիւնները պարզուում է միջնադարեան Հայաստանում շինարարական գործի կազմակերպման մի հետաքրքիր մանրամաս՝ աւանդատները կառուցուել են առանձին անհատների միջոցներով (3): Թէ՛ բազմաթիւ արձանագրութիւններում եւ թէ՛ պատմիչների մօտ վանքի գլխաւոր եկեղեցին կոչուում է Ս. Ստեփանոս Նախավկայ (գրականութեան մէջ յաճախակի այն սխալմամբ անուանուում է Ս. Կարապետ): Եկեղեցին ունի ներքուստ խաչաձեւ, արտաքուստ ուղղանկյուն չորս անկյուններում երկյարկ պատերի յորինուածքով (3): Թէ՛ բազմաթիւ արձանագրութիւններում այն հանդիպում է միայն Նորավանքում: Աստուածածնից աջ գտնուող պատկերի ձեւերն ունեն բերկար փաթեթի վրայ փորագրուած են՝ «ԱՅ ԿՈՅՍ» եւ «ԵՄԱՅԻ»: Այս բառերի իմաստը բացայայտելու օգնում է այն, որ աջ դիմաքանդակը անվիճելիորէն նայի մարգարէն է: Մեր կարծիքով, այս արձանագրութիւնը պատկերում է աւետարանական հետեւեղ տողերը՝ «Որպէս եւ գրեալ է՝ ի գիրս պատգամք Եսայայի մարգարէի: Չայս բարբարոյ յանապատի» (Աւետարանը ըստ Զուլկասու, գլուխ Գ, 4): Միջնադարում «բարբարո» փոխարէն օգտագործուել է նաեւ միայն «բառ» (8): Իսկ «Յայնապատի» բառը բաց է թողնուած: Հայկական վիմագրութեան մէջ այսպիսի օրինակներ շատ կան, երբ գրուում են աստուածանշանային կամ աւետարանական բանաձեւերի միայն առաջին խօսքերը: Չայս քանդակը, հետեւաբար, պատկերում է Յովհաննէս Մկրտչին, որովհետեւ, ըստ Մարկոսի Աւետարանի (գլուխ Ա, 3) աստուած է՝ «Չայն բարբարոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհ Տեսնոն, եւ ուղիղ արարէք զչաւիղս նորս: Եւ եղև զի Յովհաննէս մկրտէր յանապատի...»: Եւ պատմական չէ, որ «Չայն» բառի առաջին Չ տառը քանդակում ուղղակի դուրս է գալիս Յովհաննէս Մկրտչի շուրթերից: Փրկչական մարգարէութեան եւ Աստուածածնի այսպիսի համատեղ ինքնատիպ պատկերագրութիւնը եզակի է միջնադարեան հայ արուեստում:

բնորոշ զուսպ յարդարանք եւ նուազագոյն լուսաւորութիւն: Բեմի լուսամուտի լուծումը բացառիկ է հայ ճարտարապետութեան մէջ՝ այն ոչ թէ իրականացուած է չէնքի երկայնական առանցքին համապատասխան, այլ բացուում է շեղ՝ դէպի հարաւ թեքուած: Այդ տրուել է յատուկ նպատակով, որպէսզի վաղորդեան արեւի ճառագայթները կիսախիսաւոր դահլիճում լուսաւորեն Սմբատի տապանաբարը, որը դահլիճի կենտրոնից քիչ հարաւ է գտնուում: խորանի հարաւային որմնախորշից մուտք կայ դէպի տապանատան հարաւարեւելեան անկեան պատի շարուածքի հոծ զանգուածի մէջ պատրաստուած թաքստոցը: Բեմի առաջամասը գարդաբան է երկրաչափական զարդաքանդակներով (չեղանկյուններ եւ քառաթեւաստղեր), դէպի դահլիճը նայող բեմի պատերի ստորին մասում քանդակուած են խոշոր խաչեր, որմնակամարների ապսխտի կից իմփոսքների վրայ՝ աղանդներ (հիւսիսային գլուխը չի պահպանուել), իսկ հարաւայինի վեթեւում կայ քանդակագործ վարպետի նշանը՝ «Ո» տառը:

Ս. Ստեփանոս Նախավկայ եկեղեցուն արեւմուտքից կից է գաւիթը, որը նոյնպէս ծառայել է որպէս Օրբէյեանների տոհմական տապանատուն: Ըստ շինարարական արձանագրութեան, այն կառուցել է Սմբատ իշխանաց իշխանը՝ 1261 թուին(6): Սակայն ներսում, հիւսիսային եւ հարաւային պատերին եղած 1232 թուին եւ 1256 թուին նուիրատուական արձանագրութիւնները վկայում են, որ գաւիթի շինարարութիւնը սկսուած է եղել ոչ ոչ քան 1232 թուին, իսկ 1261 թուին այն աւարտուել է (գաւիթի կառուցման աւարտի հետ միաժամանակ վերանորոգուել է Ս. Ստեփանոս Նախավկայ եկեղեցին(7): Գաւիթն ուղղանկյուն (9,4x12,0 մ. արտաքին չափերով) չէնք է, որի ծածկը եզակի է հայկական նոյնատիպ կառուցուածքների համար՝ այն իրականացուած է գոց թաղերով: Սակայն գաւիթի ներսում պարզ երեւում է, որ այն սկզբնական նախատեսուած է եղել կառուցել կամ խաչուող կամարներով, կամ չորս սիւների վրայ յենուող ծածկով. այդ են վկայում չէնքի պատերին կից, մօտ երեք մեթր բարձրութեամբ պահպանուած երկուսական որմնախիւնը: Գաւիթն ունի երկու դուռ՝ գլխաւոր արեւմուտքից է, իսկ միւսը բացուում է հարաւային պատի արեւելեան մասում եւ նախատեսուած է Ս. Կարապետ եկեղեցու ու գաւիթի անմիջական կապի պահպանելու համար: Գաւիթի յատակը ծածկուած է Օրբէյեան իշխանների, սիւնեաց եպիսկոպոսների ու միտոպոլիտների տապանաքարերով, որոնց թիւում է նաեւ պատմիչ Ստեփանոս Օրբէյեանի գերեզմանաքարը: Ելնքի ծաւալատարածական յորինուածքը, համապատասխանաբար ծանրանիստ են, ճարտարապետական ձեւերը խառնուել, համահարկուել գաւիթի հիմնական նշանակութեանը՝ սիւնեաց հոգեւոր կենտրոնի եւ Օրբէյեանների տապանատունը յիշելու: Սակայն ներսում առաջ որոշակի աշխուժանում է հարթաքանդակների, խաչքարերի, երկրաչափական գարդաքանդակների շնորհիւ: Յարդարանքում օգտագործուած է նաև դոյն՝ ծածկի վրայ կարմիր ներկով ճարտարական եւ ոճաւորական բուսական զարդակարներ կան: Վերջինիս նկարուածքը շատ նման է կիրիկեան ձեւագրերի, առաջին հերթին Հեթում Բ-ի «Ճաշոցի» (1286 թուին) գարդակներին:

Միջնադարեան հայկական արուեստում ինքնատիպութեամբ, գեղարուեստական բարձր յատկանիշներով առանձնանում են Նորավանքի գաւիթի արեւմտեան դրան եւ լուսամուտի ճակատակալ քարերի պատկերաքանդակները: Դրան նախատակալ քարի կենտրոնում քանդակուած Աստուածածնին՝ ձախ ծնկին նստած մանուկ Յիսուսով, սակայն յանգնած է հանրայայտ «նստած Հողիգիտորի» պատկերաքանդակի թեման: Այն չափազանց լայն տարածում ունի հայկական քանդակագործական արուեստում դեռ վաղ միջնադարից սկսած: Ուշագործ է հարթաքանդակի խորապատկերը՝ ճակատակալ քարի ողջ մակերեսը ծածկուած է բուսական զարդերով, որի մէջ, Աստուածածնից աջ եւ ձախ, պատկերուած են լուսապատկերով երկու անձնաւորութիւն: Բուսական քանդակների միահիւսուած են նաեւ մակագրութիւնները: Հետեւաբար, մենք ունենք «արապես» կիրառման մի ինքնատիպ օրինակ, որտեղ զուգակցուել են, թեւում է՝ թէ՛ անհամադրելի տարրեր՝ քրիստոնէական պատկերաքանդակը՝ մասնաւորապէս շինութիւնների բնորոշ «վիմագրական» զարդաքանդակի հետ: Եւ թէ՛ չայլանայ մանրանկարչութեան մէջ «արապես» կիրառման բազմաթիւ օրինակներ կան, ապա ճարտարապետական յարդարանքում այն հանդիպում է միայն Նորավանքում: Աստուածածնից աջ գտնուող պատկերի ձեւերն ունեն բերկար փաթեթի վրայ փորագրուած են՝ «ԱՅ ԿՈՅՍ» եւ «ԵՄԱՅԻ»: Այս բառերի իմաստը բացայայտելու օգնում է այն, որ աջ դիմաքանդակը անվիճելիորէն նայի մարգարէն է: Մեր կարծիքով, այս արձանագրութիւնը պատկերում է աւետարանական հետեւեղ տողերը՝ «Որպէս եւ գրեալ է՝ ի գիրս պատգամք Եսայայի մարգարէի: Չայս բարբարոյ յանապատի» (Աւետարանը ըստ Զուլկասու, գլուխ Գ, 4): Միջնադարում «բարբարո» փոխարէն օգտագործուել է նաեւ միայն «բառ» (8): Իսկ «Յայնապատի» բառը բաց է թողնուած: Հայկական վիմագրութեան մէջ այսպիսի օրինակներ շատ կան, երբ գրուում են աստուածանշանային կամ աւետարանական բանաձեւերի միայն առաջին խօսքերը: Չայս քանդակը, հետեւաբար, պատկերում է Յովհաննէս Մկրտչին, որովհետեւ, ըստ Մարկոսի Աւետարանի (գլուխ Ա, 3) աստուած է՝ «Չայն բարբարոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհ Տեսնոն, եւ ուղիղ արարէք զչաւիղս նորս: Եւ եղև զի Յովհաննէս մկրտէր յանապատի...»: Եւ պատմական չէ, որ «Չայն» բառի առաջին Չ տառը քանդակում ուղղակի դուրս է գալիս Յովհաննէս Մկրտչի շուրթերից: Փրկչական մարգարէութեան եւ Աստուածածնի այսպիսի համատեղ ինքնատիպ պատկերագրութիւնը եզակի է միջնադարեան հայ արուեստում:

### ՍՈՒՐԱՏ ՀԱՐԱՐԹԵԱՆ

- (1) Ստ. Օրբէյեան, Պատմութիւն Գահանգիին Սիւսական, Թիֆլիս, 1911, էջ 346:
- (2) Նոյն տեղում, էջ 489-490:
- (3) «Դիւան հայ վիմագրութեան», պրակ, 3 Երևան, 1967, էջ 212-213:
- (4) Նոյն տեղում, էջ 234:
- (5) «Կանոնագիրք հայոց», Ա. Երևան, 1964, էջ 381:
- (6) «Դիւան հայ վիմագրութեան», պրակ 3, էջ 218-219:
- (7) Նոյն տեղում:
- (8) «Նոր բարոյք հայկազգեան լեզուի», Բ. Ա. Վեհտիկ, 1836, էջ 439:



«Բեղմնախորութեան ծառը»  
Գործ՝ Պերն Չաքմանի

թիւն), «հարմուրք սիւնեակայից» (ներդաշնակ գերի-րապաշտութիւն), «միս-թիք սիւնեակայից» (խորհրդաւոր գերի-րապաշտութիւն): Այս վերջիններուն շարքին կարելի է դասել քանատաճայ գեղանկարչի Պերն Չաքմանի: Ան ծնած է Գահրիբի,

ղանկարչական անձնական դասեր առնել եգիպտացի յայտնի գեղանկարիչ Հիւսեյն Պանայի մօտ: Ապա երկու տարի ետք կ'ընդունուի Լէոնարդո Տաւինչիի անուան գեղարուեստից հիմնարկը, ուր չորս տարի կը կատարելագործէ իր ուսումը փրոֆեսորներ Ամատի Թրեմի-սոնոյի եւ Սայէտ Ապտէլ Ռասուլի հսկողութեան

## AFHIL

### ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆՍՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

**AT HOME**

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

**HOME MEDICAL EQUIPMENT SERVICES**

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen

We Also Provide

- Laboratory service.
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

**ՅՈՒՑԱՍՈՐՇ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՆՈՐ**  
**ԳՐԱՆԵՆԱԿ՝ ԱՅՇԻԼ, ԱՅԵՏԻ ԸՆԵՔ, Բ. ՅԱՐԿ**  
**ՇՆԱ (02) 242556/7**

**NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.**

**ՄՈՒՍԵՍ ԾԻՐԱՆԻ**



ԿԸ ՆՈՒՒՐԵՆ

• Պօղոս Պետիկեանի մահուան առիթով, ԶԱԼ-Լի Ծերանցոյն եղած են հետեւեալ Գուրաւորութիւնները:

Տէր եւ տիկին Ժան Սալխանեան 50,000 լ.ո., տէր եւ տիկին Սիմոն Սէմէրճեան 50,000 լ.ո., տէր եւ տիկին Կարապետ Էլմագեան 45,000 լ.ո., տէր եւ տիկին Էտմոն Խաչերեան 45,000 լ.ո., տէր եւ տիկին Եփրեմ Ծիւրըտմեան 30,000 լ.ո., Զապէլ Կելոյեան 30,000 լ.ո., Լեւոն Տէր Արթիւրեան 30,000 լ.ո., տէր եւ տիկին Սարգիս Երէջեան 30,000 լ.ո., Աճառեան Պերեթէթ 30,000 լ.ո., տէր եւ տիկին Կարապետ Մերտանեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Նազօ Թաշճեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Աւետիս Թաշճեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Սահակ Բէշիշեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Փօլ Նետիմեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Վազգէն Զամպաբեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Ալպէր Գոնաքաֆայեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Պարգեւ Զէքեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Սագօ Դարբինեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Ստեփան Դարբինեան 20,000 լ.ո., Տազէսեան ընտանիք 20,000 լ.ո., Պորանեան ընտանիք 20,000 լ.ո., տէր եւ տիկին Ռոպէր Սեմէրճեան 20,000 լ.ո., Ժոզէֆ Եղիայեան 20,000 լ.ո., Ժոզէֆին Երէջեան եւ զաւակունք 20,000 լ.ո., Պետար Ժապար 20,000 լ.ո., Ապրիլեան ընտանիք 20,000 լ.ո., տէր եւ տիկին Հալիմ Նեքէտ 15,000 լ.ո., տիկին Մատլէն Զրճրեան 10,000 լ.ո., տիկին Վիքթորիա Զապուրճեան 10,000 լ.ո., տիկին Անժէլ Արկուսեան 10,000 լ.ո., տէր եւ տիկին Անդրո Սողոմոնեան 10,000 լ.ո., տէր եւ տիկին Արշակ Պոյաճեան 10,000 լ.ո., տէր եւ տիկին Աւետիս Պալպուչաբեան 10,000 լ.ո., Յարութիւն Փիլիպոսեան եւ Բարկասեան ընտանիք 10,000 լ.ո., տիկին Ովսանա Թաւուրճեան եւ ընտանիք 10,000 լ.ո., տէր եւ տիկին Վարդան Թաւուրճեան եւ ընտանիք 10,000 լ.ո., տէր եւ տիկին Ժոզէֆ Նասար 10,000 լ.ո., տէր եւ տիկին Ժոզէֆ Հըթթի 10,000 լ.ո.:

ՃԱՏՐԱԿ



1 ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՆԱՂՆ ԵՒ ՄԱԹ 2 ԾԱՐԺՈՒՄՈՎ  
ՊՐԱՌՆ Մ. - ԿԱՆԵԹ Տ. (2002)



2 ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՆԱՂՆ ԵՒ ՄԱԹ 2 ԾԱՐԺՈՒՄՈՎ  
ԱՆՄԵՏ Ս. - ԼԱԵՇՈՒՄԻ Բ. (2002)



3 ՍԵՒԵՐԸ ԿԸ ՆԱՂՆ ԵՒ ՄԱԹ 2 ԾԱՐԺՈՒՄՈՎ  
ԹՐԷՓ Ժ. - ՄԱՆԻԲ Մ. (2002)



4 ՍԵՒԵՐԸ ԿԸ ՆԱՂՆ ԵՒ ՄԱԹ 2 ԾԱՐԺՈՒՄՈՎ  
ՍԱԼՈՒՆ Ա. - ՍԵՐՈՎԻՉ Ն. (2002)



Խնդիրներուն լուծումը տեսնել՝ 10րդ էջ

Այս սինգլը պատրաստեց՝ Էլի Հուլիշեան

★ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ★

★ ԽՈՅ (21 Մարտէն 20 Ապրիլ)

Ուշադիր եղբ դիւանագիտական ձեռք վերաբերումին, որպէսզ ոչ ոք վիրաւորէ ձեզ: Ուրեմն ձեզմէ կը պահանջուի խոհեմութիւն եւ հանգարտութիւն:

★ ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)

Աշխատանքի մէջ շարաքը պիտի սկսիք բազմազբադուրեամբ: Բարեբախտաբար մթնոլորտը հանելի է:

★ ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)

Ձեր գաւակներուն հետ ձեր յարաբերութիւնը լաւ ընթացքի մէջ է եւ ամէն ինչ դիւրին կը թուի ձեզի: Վայելեցէք օրուան բարիքները:

★ ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)

Եթէ միջոցը չունիք ձեր տունը փոխելու, ոչինչի պիտի ծառայէ ձեր ունեցած բնակարանը ոչինչ ցկատելու: Չուր տեղ դուք ձեզ մի՛ դժբախտացնէք:

★ ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)

Ձեր ասպարէզին վերաբերեալ փոփոխութիւն մը պիտի պսակուի յաջողութեամբ: Վերջապէս, այս նորութիւնը յոգնեցուցիչ պիտի չըլլայ:

★ ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Ուրիշներուն խնջութիւնը պիտի ընդունիք համբերութեամբ, մինչդեռ հազուադէպօրէն կը մտածէք ձեր հանրային մասին: Պատուեցէք նաեւ դուք ձեզ:

★ ԿՇԻՌԻ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Ձեր փոքր գաղտնիքները կը շարունակեն յառաջդիմել, եւ շուտով ձեր շուրջը պիտի ստեղծէք նոր անակնկալներ:

★ ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Մի՛ անտեսէք բժշկական կարգ մը քննութիւններ, որքան ալ դժուար ըլլան ատուք: Ձեր առողջութիւնը խնդրոյ առարկայ է:

★ ԱՂԵՂՆԱԻՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Քաջութիւնը պիտի ունենաք հաստատելու ձեր գաղափարները ձեր ունկնդիրներուն, որոնք խստապահանջ են: Պիտի ուրախանաք:

★ ԱՅԾԵՂՋԻՒՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Եթէ անգործ էք, ձեզի պիտի առաջարկուի գործ մը, որ ձեր ասպարէզէն դուրս է: Բայց ինչ ու չընդունիլ, եթէ նոյնիսկ բոլորովին տարբեր ըլլայ:

★ ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)

Մի՛ մտահոգուիք, եթէ արդարութիւնը ձեր կողմը չըլլայ: Ձեր բախտին աստղերը ձեզի հետ պիտի ըլլան:

★ ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)


Մօտաւորապէս պիտի կարողանաք քայլ պահել ձեր պիւտեկին հետ: Դուրս ելէ ոչ ոքի պարտական էք, այսուհանդերձ խնայողութիւն չէք կրնար ընել:

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՍՕՐ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

ԿԱՆԱՅԻ ԳԻՄԱՆԿԱՐՆԵՐՈՒ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ

Ճ ա շ ա - ր ա ն ն էր ու եւ ց ու ց ա հ ա ն դ է ս ի հ ա մ ա ր « պ ա շ տ օ ն ա պ է ս » յ ա տ կ ա ց ա ծ վ ա յ - ր է ր է զ գ ա յ ի օր է ն տ ա ր բ է - ր ու ո ղ ա յ լ տ ա ր ա ծ ք - ն էր ու վրայ իր է ն ց գ որ - ծ էր քր ց ու - ց ա դ ր ո ղ ա ր ու ե ս - տ ա գ է տ ն է - ր ու թ իւր կը շ ա ր ու ն ա կ է բ ա զ մ ա ն ա յ Պ է յ ր ու թ ի տ ա ր ա ծ - ք ի ն : Օր ի - ն ա կ ն էր տ ա յ ու հ ա - մ ա ր ն չ է ն ք ա մ ի ս ն էր առ ա ջ ք ա - ղ ա ք գ տ ն ո ղ թ է յ ա ր ա ն « Փ օ յ » ի մ է ջ շ ուր ջ եր - կ ու շ ա ր ա թ գ ո յ ա տ ե - տ ա ծ ք ա ն դ ա կ ն էր ու ց ու ց ա հ ա ն դ է ս մը, ի ն չ ա փ ս ն ա եւ « Յ ր - ն է յ » ճ ա շ ա ր ա ն ի ն ձեղ ն ա յ ա ր կ ր, որ վ եր ջ է ր ս վ եր ա ծ ու ե - ց ա յ ց ու ց ա հ ա ն դ է ս ի : ի ս ո ի հ ա ր ա կ ա ն ա ր ու ե ս տ ու կ եր - պ ա ր ու ե ս տ ի ա յ լ է - ա յ լ ա ր տ ա յ ա յ յ ու - թ ի ն ն էր ք ն ո յ յ ա ր - կ ի ն տ ա կ մ է կ տեղ ո ղ ա յ լ ց ու ց ա հ ա ն դ է ս մը տեղ ի կ ' ու ն է ն ա յ « Ձ ի ն ք » փ ա պ - ճ ա - շ ա ր ա ն ի ն մ է ջ, որ



Լայա Ռահմանի գործերն օրինակ մը

յաճախակի սովորու - թիւնը ունի իր պատե - րը յատկացնելու լիբա - նանցի երիտասարդ արուեստագէտներու գործերուն ցուցադրու - թեան:

Մինչեւ 6 Յունիս «Ձինք»ի տարածքնե - ռուն վրայ պիտի ց ու - ի ս ո ի հ ա ր ա կ ա ն ա ր ու ե ս տ ու կ եր - պ ա ր ու ե ս տ ի ա յ լ է - ա յ լ ա ր տ ա յ ա յ յ ու - թ ի ն ն էր ք ն ո յ յ ա ր - կ ի ն տ ա կ մ է կ տեղ ո ղ ա յ լ ց ու ց ա հ ա ն դ է ս մը տեղ ի կ ' ու ն է ն ա յ « Ձ ի ն ք » փ ա պ - ճ ա - շ ա ր ա ն ի ն մ է ջ, որ Մեծադիր եւ սեւ - ջ եր ու ն ժ ա մ էր ք :

ԱՅՍՕՐ

- Երաժշտական երեկոյ՝ «Հարմոնի տը սուր», ճիւղ՝ «Օֆեսպալ», լը ռուս տիւ սըրբոնտ ամփիլի», ժամը 6:30ից, ֆրանսական Մշակութային կեդրոնին մէջ:

- Նկարչական ցուցահանդէս՝ «Ժօն ֆամ», Քա - րին Ուահպէի գործերը, «Էսփան Էս. Տե.» ցուցա - սրահին մէջ, մինչեւ 31 Մայիս:

- Նկարչական ցուցահանդէս՝ «Ճընիթ Թրու քա - լըրզ», Ապտէլ Մաուլա Օուէյնիի գործերը, «Ասո - սիափոն փուր լը տեւելոփման սոսիալ»ի կեդրոնին մէջ, մինչեւ 24 Մայիս:

- Լուսանկարչական ցուցահանդէս՝ «Պէյրուք Այզ», Քրիսթիան Քաթաֆալոյի գործերը, «Յընէլ» ցուցասրահին մէջ, մինչեւ 16 Մայիս:

- Ցուցահանդէս՝ «Փանորամա Էօրոփեա», «Վիլ - լա Օտի»ի մէջ, մինչեւ 23 Մայիս:

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՒԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ  
«ԱԶԳԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

Ա.Զ.Գ.Ա.Կ 50 ՏԵՄԲԻ ԱՄ.Ա.Ձ 12 Մայիս 1953

ՀԱՅԵՐՈՒ ՆՊԱՍՏԸ ԹՈՒՐԻՔԻՈՅ ՎԵՐԵԼՔԻՆ


Պոլսոյ մէջ վերջերս տեղի ունե - ցած է Արամեան Սանուց Միութեան կողմէ կազմակերպուած մշակութա - յին երեկոյ մը, որուն ընթացքին փրոֆ. տոքթ. Սիւհէյլ Ինգիլէր խօսած է Թուրքիոյ գրական, գեղարուեստա - կան ու գիտական վերելքին ծառայող հաշ ա կ ա ն ա ուր դ է մ ք եր ու մ ա ս ի ն : Բանաստեղծ Երախտագիտութեամբ յիշատակած է այն դէմքերը, որոնք իր ուսուցիչները եղած էին, եւ որոնց ինք կապուած էր անմոռանալի յիշա - տակներով: Անոնց գլուխը կու գար տոքթ. Մ. Խորասանեան:

ԱՅՍՕՐ՝ 12 ՄԱՅԻՍԻՆ

1942 - Մահ Ուրբէն Բերբերեանի, հանրային գործիչ եւ հեղինակ: 1963 - Օծուն Խորեն Ա. կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ:

ՈՒՐՖԱՅԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ  
ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԸՐԱԿԵՐ  
Ուրֆայի Հայրենակցական Միութեան վարչութիւնը կը հրաւիրէ իր հայրենակիցները, անդամական ընդհա - նուր ժողովի, 16 Մայիս 2003, երեկոյեան ժամը 7:00ին, միութեան տան մէջ:  
ՕՐԱԿԱՐԳ  
- Վարչութեան երկամեայ գործունէութեան նիւթաբա - րոյական տեղեկագիրի զեկուցում:  
- Նոր վարչութեան ընտրութիւն:  
ԾԱՆՕԹ.- Երեկոյեան ժամը 7:30ին ներկայանալու թիւը մեծամասնութիւն պիտի համարուի:  
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5434 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ



- 1. Թատերական դեկա - վար - Խարտեաչ: 2. Անօգուտ - Միամեայ ուլ (Տակ.): 3. Լեզուով մը՝ այո՛ - Համազգի: 4. Մեկուսի - Ափրիկ - եան մայրաքաղաք: 5. Հոմանի - Յուցական անական - Հայ իրջ: 6. Ս. Փարանջեանի ֆիլմերէն՝ «... գոյնը» - Արական օտար անուն: 7. Դրկից գիրեր - Գծագրական գործիք: 8. Հաստատական պատա - խան - Իզպան օտար անուն: 9. Հայկական ամիսներու Դ. օրը - Շնչարգելութիւն: 10. Հիմա - Շէն - Իրաք - եան Լրատու Գործակա - լութիւն: 11. Հողածուխ - Նիւթ:

ԹԻՒ 5433  
ԽԱՉԲԱՌԻՆ  
ԼՈՒԹՈՒՄԸ  
1 2 3 4 5 6 7 8 9 10 11  
1 Պ Ա Ս Ա Մ Մ Ո Ւ Ն Ք  
2 Ա Ի Ա Ր Ա Ս Ս Ի Ր Ա  
3 Թ Ա Ս Ա Ն Պ Պ Ա Ն Զ  
4 Ա Ն Պ Ա Ր Բ Կ Ս Ա  
5 Կ Ա Ր Ի Ք Պ Ա Ն Ա  
6 Կ Ե Լ Ք Ի Ն Ա Ս  
7 Վ Ն Պ Ա Ր Ա Ս Ո  
8 Ա Ն Ա Պ Ա Ն Կ Ա Ս  
9 Չ Ա Կ Ա Ո Ա Կ Ի Ա Ք  
10 Կ Ա Ր Լ Ա Ս Ի Ն  
11 Ա Ն Ի Կ Պ Ր Ա Ս

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Ն



## «ՇԱՐՈՒՆԱԿԻՐ ԺՊՏՄ Լ...»

Հաւատալով, որ կրթութեան նպաստող գործունէրէն՝ դպրոցին չափ կենսական է մարմնակրթութիւնը, մեզմէ շատեր իրենց պատկերները մղած են, որ մասնակցին Հ. Մ. Ը. Մ.ի գործունէութեանը եւ հետեւին մրցումներուն:

Պէտք է ընդունիլ սակայն, որ յատկապէս մեր երկրին մէջ մարմնակրթութիւնը դաստիարակիչ յատկանիշ չունի... երկարատեւ է ի վեր:

Խօսքը տասնամեակի մը մասին չէ, երբ Չղարթայի Սալամին դէմ տեղի ունեցած մրցումին (ան) իրաւարարը նոյնինքն Թալէպ Ռամատանն էր, որ դարձեալ ամէն ճիգ ըրաւ հաւասարութիւն մը խելելու Հ. Մ. Ը. Մ.էն եւ... ողբերգութիւնը կը յիշէք բոլորդ:

Ոչ, խօսքը այդ տարուան մասին չէ միայն, այլ՝ աւելի քան քառասնամեակ մը առաջ:

Հ. Մ. Ը. Մ.ի կատարած մրցումէն կը վերադառնալիս յաղթական, երբ մեզ փոխադրող օրօպիւսին վրայ փամփուշտներ արձակուեցան:

Հայրս անմիջապէս զիս պտուկեցուց նստարաններուն միջեւ, յատակին, եւ անըղջ մարմնովը ծածկեց զիս, դէմքը՝ դէմքիս, աչքերը՝ գամած աչքերուս: Չեմ գիտեր, թէ ես ի՞նչ զգացի կամ մտածեցի այդ պահուն, թէ ո՛ր տեղի ունեցաւ այդ միջադէպը, կամ որո՞նք էին ընդհանրապէս... բայց հօրս այդ արտայայտութիւնը մնաց անջնջելի:

Անցեալ Չորեքշաբթի, Հ. Մ. Ը. Մ. - Ախտ (2-2) մրցումը հապիւ աւարտած, նշմարեցի տղոս աչքերը եւ սարսափեցայ...:

Քառասնամեակ մը առաջ հանրակառքին մէջ ինծի նայող հօրս աչքերուն արտայայտութիւնն էր...

Մինչ զինուորներով շրջապատուած դաշտէն դուրս եկող Թալէպ Ռամատանի աչքերը կը ծպտէին:

ԹՈՐԳՈՄ

## ՅԵԾԵԼԱՐՇԱԲ. ԺԻՐՕ

### ԻՏԱԼԱՑԻՔ ԿԸ ՏԻՐԱՊԵՏԵՆ

Անցեալ Շաբթի օր սկսաւ Իտալիոյ հեծելաբարձակի շրջավազքը (ժիրօ) երբ տեղի ունեցաւ առաջին



Ալեսանտրօ Փետաքի, որ կը հասնի ժամանման գիծ

հանգրուանի մրցումը՝ Լեչէի մէջ (201 քւ.): Առաջին օրէն իսկ տիրապետեցին իտալացի հեծելանորդները, որոնք շտրիի Ալեսանտրօ Փետաքիի (Ֆասսա Պորթոլօ) անոնք շահեցան առաջին հանգրուանի մրցումը. ան արձանագրեց 5 ժամ 16 վայրկեան եւ 3 երկվայրկեան արդիւնք մը: Նշենք, թէ 2րդ եւ 3րդ դիրքերը գրաւողները եւս իտալացիներ էին:

2րդ հանգրուանի մրցումը, որ տեղի ունեցաւ երէկ Քովելթիոյ Մաթերա (177 քւ.), դարձեալ վերջ գտաւ իտալացի հեծելանորդ Ֆասսա Պալտաթոյի յաղթանակով (Ալեպիօ), որ ժամանման գիծ հասաւ արձանագրելով 4 ժամ 46՝ 57՝ արդիւնք մը: 2րդ հանգրուանին եւ 2րդ եւ 3րդ դիրքերն վրայ գտնուողները իտալացիներ էին:

Այսօր տեղի կ'ունենայ 3րդ հանգրուանի մրցումը, Փոլիբորոյէն Թերմէ Լուիճիանէ (145 քւ.):

ՍԵՆ ԺՈՂԵՖ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ  
ԲԱԺԱՆՄՈՒՆԲ

**ՀԱՅՎԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵՎՈՅ**

Ներկայացում եւ համերգ  
**ՊՐՆ. ՅԱՐՈՒԹ ՅԱԶԼԵԱՆԻ**

Մասնակցութեամբ «ԿՈՄԻՏԱՍ» ԵՐԳՉԱՆՈՒՄԲԻՆ  
Տեղի կ'ունենայ Ուրբաթ 16 Մայիս 2003,  
երեկոյան ժամը 6:30ին,  
Amphitheatre Pierre Y. Abou Khater Campus De  
Science Humaines - Rue De Damas

## ՔԱԼԶԻՕ

### ԵՈՒՎԵՆԹՈՒՄ 27ՐԴ ԱՆԳԱՍ ԸԼԼԱԼՈԿ ՀԱՆԴԻՍԱՑԱԲ ԱՆՈՅԵԱՆ

Իտալիոյ ֆուտբոլի ախտաբանութեան (Քալչիօ) 32րդ հանգրուանի մրցումներուն, հակառակ անոր որ պարագլուխի դիրքը գրաւող Եուվենթոս, իր դաշտին «Տէլ Ալփի» մէջ 2-2 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց, սակայն 27րդ անգամ ըլլալով հանդիսացաւ ախոյեան, նկատի ունենալով որ անոր անմիջական մրցակիցը եւ՝ Ինթեր Միլան հաւասարութիւն մը արձանագրեց Փարմայի հետ (1-1): Ախոյեանութեան աւարտին մնացած է երկու հանգրուան միայն եւ Եուվէ ութ կէտի առաւելութիւն ունի Ինթերի վրայ: Ախոյեան կազմին կողերը նշանակեցին՝ Տալիտ Թրեպպէ (25րդ)՝ փետեթիով եւ Մարքօ Տի Վալօ (46րդ):



Եուվենթոսի մարզիկները, որոնք կը սօցեն իրենց կատարած իրագործումը

Ստորեւ՝ 32րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Պոլոնիա - Լագիօ Ռոմա	0-2
Պրեշիա - Ա. Սէ. Միլան	1-0
Քոնօ - Քիեւօ	2-4
Էմփոլի - Աթալանթա	0-0
Ինթեր Միլան - Փարմա	1-1
Եուվենթոս - Փերուճիա	2-2
Փիաչենցա - Ռեճիանա	2-2
Ա. Էս. Ռոմա - Թորինօ	3-1
Ուտինէպէ - Մոտենա	2-1

ԳՆԱՍԵՌՈՐՈՄ	ԿԵՏ
1.- Եուվենթոս	69 (59-24)
2.- Ինթեր Միլան	61 (60-36)
3.- Ա. Սէ. Միլան	58 (50-25)
4.- Լագիօ Ռոմա	57 (53-29)
5.- Քիեւօ	54 (48-35)
6.- Փարմա	50 (50-34)
7.- Ուտինէպէ	50 (34-34)
8.- Ա. Էս. Ռոմա	48 (54-44)
9.- Պրեշիա	41 (33-33)
10.- Պոլոնիա	41 (38-42)
11.- Փերուճիա	41 (38-44)
12.- Էմփոլի	37 (35-43)
13.- Մոտենա	37 (28-44)
14.- Աթալանթա	32 (31-45)
15.- Ռեճիանա	32 (34-52)
16.- Փիաչենցա	27 (38-57)
17.- Քոնօ	21 (27-55)
18.- Թորինօ	20 (22-56)

### ՊԱՏԵԹՊՈԼ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Լիբանանի պատերազմի տարիքային ախոյեանութեան մրցումներուն, աղջկանց 84 - 85 դասակարգին մէջ Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս անցեալ շաբաթվաբերին թէեւ 58 - 40 արդիւնքով պարտութիւն մը կրեց Քարմէ Ապէլիանէն, սակայն յաջողեցաւ անցնիլ Բ. հանգրուան, նկատի ունենալով որ Պիպոլի դէմ անկէ 20 - 0 յաղթական հռչակուեցաւ՝ մրցակից կազմին դաշտ ներկայացած չըլլալուն համար:

Իրենց կարգին, Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի 86 - 87ի ծունկ աղջիկները ապահովեցին Բ. հանգրուանին իրենց տոմարը, յաջողաբար պարտութեան մատնելէ ետք ժամհուրը (53 - 18) եւ Ռիտի Պէյրուրը (72 - 57): Աղջկանց 88 - 89 դասակարգին մէջ, Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս անցեալ շաբաթվաբերին թէեւ արձանագրեց երկու յաղթանակ, յաջողաբար պարտութեան մատնելով Պիպոլը (78 - 33) եւ Սաժէն Պէյրուրը (58 - 54), սակայն անիկա տակաւին չէ կրցած ապահովել Բ. հանգրուանին իր տոմարը:

Տղոց 86 - 87 դասակարգին մէջ Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս իր կատարած առաջին մրցումին 53 - 50 արդիւնքով պարտութիւն մը կրեց Շեպիպէ Շիահէն, մինչ երկրորդին 20 - 0 արդիւնքով յաղթական հռչակուեցաւ, նկատի ունենալով, որ անոր մրցակիցը Ապիան խալիճ զաշտ չներկայացաւ: Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս տակաւին չէ ապահոված յաջող հանգրուանին իր տոմարը:

### ԱԹԼԵԹԻԶ

#### Հ. Մ. Ը. Մ. Ի ՏՂԱՔԻՆ ՈՒ ԱՂՋԻԿՆԵՐԸ ՇԱՀԵՑԱՆ ՄԵՏԱԼՆԵՐ

Լիբանանի արթիպի մարտիքային ախոյեանութեան մրցումներուն, որոնք տեղի ունեցան շաբաթվաբերին՝ ժամհուրի դաշտին վրայ, Հ. Մ. Ը. Մ. Ի արթիպիները շահեցան մէկ ոսկի եւ երկու արծաթ մետալներ:

Աղջկանց 18-19 տարեկան դասակարգին մէջ, Ալիք Թապաթեան բարձրութիւն ցատկելու մէջ հանդիսացաւ առաջին, արձանագրելով 1,52 մ. արդիւնք մը, մինչ Լիւսի Տէկիմէնճեան գրաւեց երրորդ դիրքը, արձանագրելով 1,25 մ. արդիւնք մը:

Տղոց 18-19 տարեկան դասակարգին մէջ, Չօհրապ Կարապետեան հանդիսացաւ երրորդ, երբ 5000 մէթր վազքի մրցումներուն արձանագրեց 20 վայրկեան 002 արդիւնք մը:

**ՎԱՐՉՈՒ ԿԱՍ ԿՈՒՉՈՒԻՆ**

●Ոսկերչատուն մը կարիք ունի փորձառու եւ վարպետ ջար գամողներու եւ մոմի վրայ աշխատող օրիորդներու: Դիմել՝ 01-240262:

●Թապարձա Պիշի մէջ: Հեռ. 03/881699 եւ 01/248772:

## ՓՈՆԿ ՓՈՆԿ

### Հ. Մ. Ը. Մ. Ի ԱՂՋԻԿՆԵՐԸ ՓԱՍՏԵՑԻՆ, ՈՐ ԿԸ ՄՆԱՆ ԼԱԲԱԳՈՅՆԸ

Անցեալ շաբաթվաբերին, Մոն Լա Սալի մէջ տեղի ունեցաւ փինկ փոնկի աղջկանց խմբային ախոյեանութեան վերջին եւ աւարտականի



Հ. Մ. Ը. Մ. Անթիլիասի աղջկանց ախոյեան կազմը



Հ. Մ. Ը. Մ. Պէյրուրի տղոց խումբը

բնութիւնը Հ. Մ. Ը. Մ. Պէյրուրը - Ատապ Ուալ Ռիտառ ճակատումը: Հ. Մ. Ը. Մ. Պէյրուրի աղջիկները անգամ մը եւս փաստեցին որ կը մնան Լիբանանի յաւազունը, նկատի ունենալով որ անոնք մրցաշարքը աւարտեցին առանց պարտութեան, արձանագրելով վեց յաղթանակ: Ատապ Ուալ Ռիտառի դէմ անոնք արձանագրեցին 3-1 արդիւնքով յաղթանակ մը, այսպիսով մրցաշարքին ընթացքին միայն մէկ սեթ պարտուելով:

Մրցումին աւարտին առաջին, երկրորդ եւ երրորդ դիրքերը գրաւողները ստացան իրենց բաժակները եւ մետալները:



Աւօ Մունջողլեան, որ իր բաժակը կը ստանայ ֆետերասիոնի Գախազահ Միշէլ Տը Շատարեւեանէն

Հ. Մ. Ը. Մ. Պէյրուրի տղաքը, որոնք գրաւեցին երրորդ դիրքը խմբային ախոյեանութեան մրցումներուն, իրենց կարգին բարձրացան փոտիում:

Լիբանանի փինկ փոնկի ֆետերասիոնը նոյն օրը կատարեց նաեւ Լիբանանի փինկ փոնկի գարնանային մրցաշարքին ախոյեան հանդիսացած մարզիկներուն բաժակի տուչութիւնը: Բաժակ ստացողներուն կարգին էր Աւօ Մունջողլեան (Հ. Մ. Ը. Մ. Պէյրուր), որ 92-93ի ծունկ դասակարգին մէջ հանդիսացած էր ախոյեան:

ԼՕԽԻ «Ա. ՊՈՒԼՎՈՒՐԵԱՆ»  
ԸՆԿԵՐԱԲԺՇԿԱԿԱՆ ԿԵԴՐՈՆ

**ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ**

ԱՐԵԱՆ ԳՆԴԻԿՆԵՐՈՒ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆԸ  
ԶԱՓՈՂ ԱՆՎՃԱՐ ՔՆՆՈՒԹԵԱՆ ԱՐՇԱԻ

Արեան գնդակներու համեմատութեան ընճութիւնը կը չափէ հիմնկապի խտութիւնը, կարմիր եւ ձերմակ գնդակներու, ինչպէս նաեւ փաթեթներու թիւը իւրաքանչիւր 1 միլիլիթր խորանարդ արեան մէջ: Մասնագետ անձեր, ընճելով արեան կաթիլ մը՝ մանրադիտակի տակ, կրնան ճշդել անոր մէջ գտնուող ածրակաւ բջիջները եւ համապատասխան արդիւնքը տալով կարելի է ախտաճանաչումներ ընել:

ԼՕԽԻ Արաքսի Պոլիտեխնիկական Ընկերաբժշկական Կեդրոնի Նախագոյնական Բաժանմունքը նախնախնոր իւրաքանչիւր հայրորդի հառաջընթացը կազմակերպած է արեան գնդակներու համեմատութիւնը չափող անվճար ընճութեան արշաւ մը՝ 13, 14 եւ 15 Մայիս 2003ի, առաւօտեան ժամը 8:00էն 10:00:

